մաձայն, Մկրտիչ եպս. կ'անդամակցի նոյն ժողովին և կ'ընտրուի աաենապետ և պատրիարքական փոխանորդ։ 1920է ըսկսեալ կը դասախօսէ Ժառ. Վարժ.ի մէջ կրօնագիտութիւն, եկեղեցական պատմութիւն և բարոյագիտութիւն և մինչև ցարդ կը վարէ նոյն պաշտօնը։ 1910ին հրատարակած է Տղոց Կրօնագիտութիւնը անուն դասագիրքը. պատրաստած է Քրիստոնեական եկեղեցոյ տերունական տօներու ծագումը (անտիպ) ինչպէս նաև Միսքանիք եւ այցելոյ հայ Երուսաղէմի խորագրով սոյն գիրքը։

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ՋՈՒՂԱՅԵՑԻ.— Իր կնոջ մահուանէն յետոյ կ'ստանայ վեղար. ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. 1766ին կը կարգուի Նւ. Հնդկաց. կը վերադառնայ և կը ներկայացնէ իր հաշիւները և կ'ուղևորի Ս. Էջմիածին. նոյն տարին կը ձեռնադրուի եպս. Կարապետ պտրք.ի խնդրանաց համաձայն, իր ձեռնադրութիւնը կը կատարուի իբր միաբան Ս. Յակոբի, և վերստին կը կարգուի Նւ. Հնդկաց. հաւանութեամբ Սիմէոն կթղ.ի. բայց Մկրտիչ եպս.՝ իր ուխտագրին մէջ աւելցնել կուտայ սա կտորը. «Եթէ հարկ լիցի գի ի միաբանութիւն Սրբոյ Երուսաղէմի անկարելի լիցի ինձ մնալ, ի յելանելն իմ անտի ոչ յայլ ուրեք գնացից. բայց ի Սուրբ Աթոռս եկից և կամ Ջուղա ի սուրբ Ամենափրկիչ վանքն մեր գնացից». (Դիւան, Գ. էջ 643)։ Առ. Ջուղայու 1769ին. միջոց մը կ'առանձնանայ Շիրազի մէջ և կը վայելէ Քէրիմ խանի շնորհները. կը վերադառնայ Ջուղայ և 1787ին կը վախճանի և կը թաղուի Ամենափրկչեան վանքի եկեղեցւոյն արևմտեան կողմը. տեսնել նաև (Ջուղայ. Բ. հատ էջ 63-66). Ս. Յակոբայ իր յիշատակներու մասին տեսնել (ՄՁ. Թ. 532)։

ՄԿՐՏԻՉ ՈՐԴԻ ՂԱՋԱՐԻ. — Ս. Յակոբի վանքին մէջ ընդօրինակած է ՌՁՁ (= 1637) թուին ճառընտիր մը, հին և ընտիր օրինակէ. սոյն ձեռագիրը կը գտնուի այժմ Վենետիկ Մխիթարեանց Մատենադարանը. (Սրգս. Ցուց. Թ. 512. Աբեղեան, էջ Թ)։ Այս ճառընտիրին ստացող եղած է Ջաքարիա քհ. Լովայ Աւագերէցը. որդի Գասպար քհ.ի։ Մկրտիչ գրիչ 1635ին Լովի մէջ ընդօրինակած է նաեւ կանոնագիրք մը, որ կը գտնուի այժմ Ս. Էջմիածնի ձեռագիրներու Մատենադարանին մէջ (Էջմ. Ցուց. Թ. 76)։